# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 16.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 գնման պայմանագրի

ք. Երևան .10. ապրիլի 2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Է. Քոչարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2020թ. N 347-Ն որոշումը և ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 16.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում <<ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգում>> բառերը փոխարինել <<ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցում>> բառերով.

բ) Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետն ավելացնել 91 օրացուցային օրով, որի հաշվարկը սկսվում է Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից.

գ) Պայմանագրի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի.

դ) Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում Կատարողի բանկային վավերապայմաններում <<<<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ, Վանաձորի մ/ճ Հ/Հ 16036026535100>> բառերը և թվերը փոխարինել <<<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, Վանաձորի մ/ճ Հ/Հ 2051422103891001>> բառերով և թվերով:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը՝ բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ<br>կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011027639<br>ՀՎՀՀ 02565827 | <<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ<br>ՀՀ ԼՄ ք. Վանաձոր, Վարդանանց 17-5<br><<Ինեկոբանկ>> ՓԲԸ, Վանաձորի մ/ճ<br>Հ/Հ 2051422103891001<br>ՀՎՀՀ 06933586 |
| Գլխավոր քարտուղար | Տնօրեն՝ |
| ______________ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն) | ______________ Է. Քոչարյան<br>(ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված*
*16.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 պայմանագրի*
*10. ապրիլի 2020թ. կնքված N1 համաձայնագրի*

*<<Հավելված N 2*
*16.10.2019թ. կնքված*
*N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 պայմանագրի*

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

**ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների**

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019-2020 թթ.՝ ըստ ամիսների,այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | |
| 1 | 71241200/81 | ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ | **2019 թ.** | | | **2020 թ.** | | | | | | | | | | | | |
| | | | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** | **Ընդ:ամենը 2019-2020 թթ.** |
| | | | 2 200 000 | 2 200 000 | **2 200 000** | - | - | - | 6 600 000 | 6 600 000 | 6 600 000 | 6 600 000 | 6 600 000 | 6 600 000 | 6 600 000 | 6 600 000 | 6 600 000 | **6 600 000** | **8 800 000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ յուրաքանչյուր տարվա համար: >>*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027639
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<ՔՎԷ նախագիծ>> ՍՊԸ
ՀՀ ԼՄ ք. Վանաձոր, Վարդանանց 17-5
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, Վանաձորի մ/ճ
Հ/Հ 2051422103891001
ՀՎՀՀ 06933586

Տնօրեն՝

______________ Է. Քոչարյան
(ստորագրություն)
Կ.Տ.